

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

“ 7 ” փետրվարի 2012թ.

№ 14-Ա

Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների եւ գրանց անբաժանելի
ՄԱՍԸ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ՀՈՂԱՇԽԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԻ ԿԱԶՄՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ
ՀԱՄԱԿԱՐԳՈՂ, ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2009
ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 3-Ի N11-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության
օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետով, 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի բ) ենթակետով և
համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի
29-ի <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու
և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թվականի հունվարի 17-ի N30
որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> N1918-Ն որոշման, **որոշում եմ՝**

1. Հաստատել հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների և դրանց
անբաժանելի մասը հանդիսացող հողաշինարարական գործի կազմման
անշխատանքները համակարգող, մշտական գործող, հանձնաժողովի անհատական
կազմը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2009
թվականի 3-ի <<Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի համայնքների
վարչական տարածքների և վարչական տարածքներից դուրս գտնվող հողերի
օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման մշտական գործող
հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու մասին>> N11-Ա որոշումը:
3. Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող
անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ



Ս.ԽԱԶԱՏՐՅԱՆ


2012թ. փետրվարի 7
ք. Կապան

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ

ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ՄԱՍԸ ԿԱԶՄՈՂ ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԻ ԿԱԶՄՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ, ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

- Ս. Խաչատրյան ՀՀ Սյունիքի մարզպետ /հանձնաժողովի նախագահ/
Մ. Կոստանոյան ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին- մարզային հողային պետական տեսչության պետ /հանձնաժողովի անդամ/
Լ. Պետրոսյան ՀՀ բնապահպանության նախարարության ներկայացուցիչ /համաձայնությամբ/, /հանձնաժողովի անդամ/
Ա. Բակունց ՀՀ գյուղատնտեսության նախարարության ներկայացուցիչ /համաձայնությամբ/, /հանձնաժողովի անդամ/
Լ. Ներսիսյան ՀՀ քաղաքաշինության նախարարության ներկայացուցիչ /համաձայնությամբ/, /հանձնաժողովի անդամ/
Ա. Ալեքսանյան ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության ներկայացուցիչ /համաձայնությամբ/, /հանձնաժողովի անդամ/
Վ. Ծատրյան ՀՀ մշակույթի նախարարության ներկայացուցիչ /համաձայնությամբ/, /հանձնաժողովի անդամ/
Ա. Հակոբյան ՀՀ մշակույթի նախարարության ներկայացուցիչ /համաձայնությամբ/, /հանձնաժողովի անդամ/
Ա. Գրիգորյան ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ներկայացուցիչ /համաձայնությամբ/, /հանձնաժողովի անդամ/
Համապատասխան համայնքի ղեկավարը /համաձայնությամբ/, /հանձնաժողովի անդամ/

Հայաստանի Հանրապետության
Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի
ղեկավար



Ռ. Ղազարյան